

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 15.07.2021թ. թիվ 2113022279 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<< 16 >> 08 2021թ. 7-13 12374

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով փաստաբան Գայանե Մանուկյանի ՄԴ/64392-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Քաղաքացի Արմենակ Ջորյանի ներկայացուցիչ՝ փաստաբան Գայանե Մանուկյանը (ծանուցման հասցե՝ քաղաք Երևան, Կոմիտասի փողոց, 30 շենք, 52 բնակարան) դիմումով վկայակոչելով մի շարք օրենքներ իր անհամաձայնությունն է հայտնել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 15.07.2021թ. թիվ 2113022279 որոշմանը՝ նշելով, որ վստահորդը լուսացույցից առաջ <<Կանգ-գիծ>> գծանշումը հատել է լուսացույցի կանաչ և կանաչ թարթող ազդանշանի ժամանակ, ուստի թույլ չի տվել վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 124.3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավախախտում:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ թիվ 2113022279 որոշումն ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները:

<< կառավարության <<<< ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 7-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ **դեղին ազդանշանն արգելում է երթևեկությունը** (բացառությամբ կանոնների 19-րդ կետով նախատեսված դեպքի) և նախազգուշացնում ազդանշանի առաջիկա փոփոխման մասին: Նույն որոշման 18-րդ կետի համաձայն՝ լուսացույցի (բացի դարձափոխայինից) կամ կարգավորողի արգելող ազդանշանի դեպքում վարորդը պետք է կանգ առնի <<Կանգ-գիծ>> գծանշման (կամ 6.16՝<<Կանգ-գիծ>> նշանի) առջև, իսկ դրա բացակայության դեպքում՝ հատվող երթևեկելի մասի առջև՝ հաշվի առնելով կանոնների 93-րդ կետը, խոչընդոտ չստեղծելով հետիոտների համար և այլ վայրերում՝ լուսացույցի կամ կարգավորողի առջև՝ խոչընդոտ չստեղծելով թույլատրելի ուղղություններով երթևեկող տրանսպորտային միջոցների և հետիոտների համար: **Նույն որոշման 19-րդ կետի համաձայն՝ դեղին ազդանշանը միանալու կամ կարգավորողը ձեռքը բարձրացնելու դեպքում այն վարորդները, որոնք հնարավորություն չունեն առանց կտրուկ արգելակելու կանգնել կանոնների 18-րդ կետում նշված տեղերում, կարող են շարունակել երթևեկությունը:**

Իրավախախտման PIN անհատական ծածկագրի տակ գետեղված տեսանյութի դանդաղեցված և դրվագային ուսումնասիրությունն ակնհայտ է դարձնում այն փաստը, որ վստահորդի արարքն արձանագրված խաչմերուկում առկա լուսացույցի վրա վստահորդի կողմից <<Կանգ-գիծ>> գծանշումը հատելու պահին միացված է եղել լուսացույցի դեղին՝ արգելող ազդանշան: Այսպես՝

- Տեսանյութի ժամը 13:33:13-րդ վարկյանին միանում է լուսացույցի դեղին արգելող ազդանշանը, երբ վստահորդի տրանսպորտային միջոցը գտնվում էր <<Կանգ-գիծ>> գծանշման առջև,

- վստահորդի տրանսպորտային միջոցը <<Կանգ-գիծ>> գծանշումը հատում է միայն տեսանյութի ժամը 13:33:15-րդ վայրկյանին, երբ դեռ շարունակվում էր միացված մնալ լուսացույցի դեղին արգելող ազդանշանը:

Տեսանյութի ուսումնասիրությունից պարզվել է նաև, որ լուսացույցի արգելող դեղին ազդանշանի ժամանակ վստահորդի ավտոմոբիլը գտնվել է <<Կանգ-գիծ>> գծանշման առջև անշարժ վիճակում, ուստի հերքվում է նաև վստահորդի կողմից <<Կառավարության 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 19-րդ կետի պահանջի ռեժիմում արարք կատարելու հանգամանքը, քանի որ վստահորդը հնարավորություն է ունեցել տրանսպորտային միջոցը կանգնեցնելու առանց կտրուկ արգելակելու:

Վերը նշված փաստերի վերլուծության արդյունքում վստահորդի կողմից իրավախախտում կատարած լինելու փաստը կասկած չի հարուցում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 124.3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն տրանսպորտային միջոցների վարորդների կողմից լուսացույցի կամ կարգավորողի արգելող ազդանշանին չենթարկվելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 2 միավոր:

Այսպիսով, հիմնավորվել է, որ վստահորդին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վերը նշված որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 15.07.2021թ. թիվ 2113022279 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել << վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Գայանե Մանուկյանին:



Ե. Կարապետյան